Լ. Միրիջանյանի անվան հ. 155 հիմնական դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՏՀՏ գործիքների կիրառման անհրաժեշտությունը տարրական դասարաններում՝ որպես ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մաս

Ուսուցիչ՝ Ղուկասյան Ելիզավետա

Ղեկավար՝ Միրզոյան Թամարա

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 3

ԳԼՈՒԽ 1. Տարրական դասարաններում ՏՀՏ գործիքների կիրառման առանձնահատկությունները----------5

ԳԼՈՒԽ 2. ՏՀՏ գործիքներից օգտվելու առավելություններն ու թերությունները տարրական դասարաններում. ուսուցիչ-աշակերտ համագործակությունը----------9

Եզրակացություն---------- 13

Օգտագործված գրականության ցանկ----------15

Ներածություն

Ժամանակակից աշխարհում յուրաքանչյուրի կյանքում գերկշռող դեր ունեն տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ): ՏՀՏ գործիքները ներխուժում են մեր կյանք և դառնում առօրյայի մի մաս: Յուրաքանչյուր տարիքում մարդն օգտվում է այդ գործիքներից՝ տարբեր նպատակներից ելնելով: Ցանկացած ոլորտում կարելի է տեսնել ու ուսումնասիրել տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունները, դրանց բերած փոփոխությունները:

Տեղեկատվայնացման գործընթացից անմասն չի մնում նաև կրթական համակարգը: Նորագույն ծրագրերն ու համացանցը փոխում են գիտելիքներ ձեռք բերելու ավանդական մեթոդները և լայն գիտելիքներ ձեռք բերելու ասպարեզ են ստեղծում: Այս ամենը սկսվում է դպրոցից՝ հատկապես տարրական դասարաններից: Շատ կարևոր է, որ տարրական դասարաններին դասավանդող ուսուցիչը նախ ինքը տիրապետի այդ գործիքներին, որպեսզի կարողանա դրանք ճիշտ ձևով բացատրել ու օգտագործել դասաժամերի ընթացքում:

Ուսումնասիրության առարկան և նպատակը: Մեր ուսումնասիրության առարկան է ՏՀՏ գործիքների կիրառման անհրաժեշտությունը տարրական դասարաններում՝ որպես ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մաս: Նպատակն է ցույց տալ այն մեթոդներն ու հնարները, որոնք օգտագործում է ուսուցիչը տարրական դասարաններում ՏՀՏ գործիքները կիրառելիս և մատնանշել դրանց արդյունավետությունն ուսումնական գործընթացում:

Հետազոտության խնդիրները: Վեր հանել այն դժվարությունները, որոնց առնչվում են և՛ ուսուցիչները, և՛ աշակերտները ՏՀՏ գործիքներով աշխատելիս, ցույց տալ այն վտանգները, որոնց կարող են բախվել աշակերտները և ընդգծել այն առավելությունները, որոնք տալիս են տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները:

Արդիականությունը: ՏՀՏ գործիքներն այժմ բոլորիս ուղեկցում են և դրանց կիրառումը կյանքի տարբեր ոլորտներում դարձել է անհրաժեշտություն: Կրթական գործընթացում այս գործիքների կիրառումն

ավելի հետաքրքիր ու արդյունավետ կդարձնի դասապրոցեսը, այստեղ մանկավարժի դերն ու պատասխանատվությունը չափազանց կարևոր է աշակերտներին հենց տարրական դասարանից մեդիագրագետ անձ դաստիրակելու և նորագույն տեխնոլոգիաներից օգտվելու հարցում: Վերը նշած փաստերը գալիս են ապացուցելու, որ այս թեման օրեցօր ավելի արդիական է դառնում և նրա առանձնահատկություններն ուսումնասիրեը դառնում է անհրաժեշտություն:

Մեր հետազոտական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. Տարրական դասարաններում ՏՀՏ գործիքների կիրառման առանձնահատկությունները

Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները գնալով ավելի են զարգանում և տեղ գտնում յուրաքանյուրիս կյանքում: Կրթական համակարգի կատարելագործումն անհնար է պատկերացնել առանց ուսուցման մեջ նոր մանկավարժական և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման, որոնք կոչված են առավել ակտիվորեն նպաստելու սովորողների մտավոր, ստեղծագործական, բարոյական և հուզական զարգացմանը: Կրթության բնագավառում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների շնորհիվ ստեղծվում է ուսումնաճանաչողական մի միջավայր, որը նպաստում է ինչպես անհատական, այնպես էլ խմբային ու զանգվածային ուսուցման տարբեր խնդիրների լուծմանը:

Մարդու ձևավորումն ու գաղափարապես զարգացումը սկսվում է հենց դպրոցից: Ներկայիս պայմաններում բացի կրթական մակարդակը շատ կարևոր է, որ մարդը լինի մեդիագրագետ, կարողանա օգտվել ՏՀՏ գործիքներից և ստանալ իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը:

2001 թվականին ընդունվել է «Կրթական տեղեկատվական միասնական համակարգի զարգացման» նպատակային ծրագիրը: Այս ծրագրի նպատակներն են՝ կրթական համակարգի տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի ձևավորումը և տեղեկատվական ու հեռահաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը կրթական գործընթացում, այդ թվում՝ ավանդական ուսուցման ընթացքում [1] :

Ավանդական ուսուցիչ-աշակերտ-դասագիրք սխեմային ավելանում է մի նոր օղակ՝ համակարգչային ուսուցում:

Տարրական դպրոցի տեղեկացվածությունը կարևոր դերակատարություն ունի կրթության ժամանակակից որակի և 21-րդ դարի երեխայի տեղեկատվական մշակույթի ձևավորման համար: Այստեղից էլ բխում են ՏՀՏ-ների օգտագործման նպատակները.

[1] https://www.e-draft.am/ru/projects/3303

• բարձրացնել սովորելու մոտիվացիան

• մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը

• նպաստել սովորողների ճանաչողական կարողությունների խթանմանը

• բարելավել դասի անցկացման մեթոդները

• ժամանակին համակարգել ուսուցման և դաստիարակության արդյունքները

• պլանավորել և համակարգել սեփական աշխատանքը

• օգտագործել այն որպես ինքնակրթության միջոց

• արագ և որակյալ պատրաստվել դասին[2]:

Նախքան աշակերտներին ծանոթացնելը ՏՀՏ գործիքների առանձնահատկություններին, ուսուցիչն ինքը պետք է ուսումնասիրի դրանք, հավաքագրի տեղեկատվություն և նաև գործնականում կարողանա կիրառել դրանք: Հետևաբար ուսուցիչը պետք է տիրապետի ժամանակակից կրթական հմտություններին, այսինքն՝ լինի մեդիագրագետ:

Տարրական դպրոցի ուսուցչի առջև ծառացած հիմնական խնդիրներից է ընդլայնել աշակերտների մտահորիզոնը, խորացնել գիտելիքները շրջապատող աշխարհի մասին, բարձրացնել երեխաների մտավոր գործունեությունը և զարգացնել խոսքը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը թույլ է տալիս ակտիվացնել սովորողների ճանաչողական գործունեությունը, դասերն անցկացնել բարձր գեղագիտական մակարդակով (երաժշտություն, անիմացիա), անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր աշակերտի՝ կիրառելով տարբեր բարդությունների առաջադրանքներ:

---

[2] Հակոբյան Լ. Ադամյան Ն. Ժամանակակից տեղեկատական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում «Մանկավարժական միտք» 2016 3-4(62-63) էջ 211-214

Համակարգչային տեխնոլոգիաները հասանելիություն են ապահովում տեղեկատվության տարբեր աղբյուրներին, բարձրացնում են աշակերտների ինքնուրույն աշխատանքի արդյունավետությունը, լայն հնարավորություն են տալիս սովորողների և մանկավարժի գործունեության համար՝ կյանքի կոչելու դասավանդման նոր մեթոդներ և միջոցներ[3]:

Տեղեկատվական միջոցների ճիշտ ընտրությունը և օգտագործումը տարրական դասարաններում մանկավարժական կարևորագույն խնդիր է: ՏՀՏ-ների կիրառումը տարրական դասարաններում ուսուցչից պահանջում է դասին նախապատրաստական մեծ ջանքեր և ժամանակ, քանի որ ամենօրյա դասը պլանավորելիս անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի սցենարը, նախագծել գործողությունների հերթականությունը և դրանք ճիշտ ձևով մատուցել աշակերտներին: Այս ամենի արդյունավետ իրականացման համար կարևորվում է ուսուցչի մեդիագրագիտությունը, դասավանդվող նյութի լիարժեք իմացությունը: ՏՀՏ գործքիներն օգտագործելիս շատ կարևոր է նաև դրանց արդյունավետ և տեղին կիրառումը: Աշակերտներին տեսասահիկների միջոցով կարելի է բացատրել օրվա դասը, իհարկե դա ուսուցչից հավելյալ աշխատանք կպահանջի, բայց դասն ավելի հետաքրքիր ու բովանդակալից կդարձնի: Համակարգիչներից օգտվելը նաև կզարգացնի աշակերտների տեսողական հիշողությունը և ավելի պատկերավոր կդարձնի ուսուցանվող նյութը: Այստեղ աշակերտներին հնարավորություն է տրվում նաև ինքնադրսևորվել, դասին առնչվող որոշ նյութեր փնտրել և ուսուցչի օգնությամբ անցկացնել դասը: Ուսուցիչն իր հերթին օրինակ՝ հայոց այբուբենի տառերի ուսումնասիրության դասի ժամանակ, կարող է գտնել և ցուցադրել այնպիսի տեսանյութեր, որտեղ աշակերտները հնարավորություն կունենան լսելու տառերի ճիշտ արտասանությունը և դրանց կիրառումը բառերի մեջ: Այս մեթոդի միջոցով ավելի հիշվող և

[3] Խաչատրյան Ռ. Մարտիրոսյան Կ. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները որպես աշակերտների ուսումնական գործունեության անկյունաքար «Մխիթար Գոշ» ուսումնամեթոդական հոդվածներ 2016 2(45) էջ 213-215

տպավորիչ կդառնա դասապրոցեսը, ինչու ոչ ուսուցիչը կարող է նաև տվյալ տեսանյութն աշակերտների ծնողներին ուղարկել, որպեսզի աշակերտները տանը նույնպես հնարավորություն ունենան դասը վերհիշելու:

ՏՀՏ գործիքներն օր օրի ավելի բազմազան են դառնում: Ինֆորմացիոն հոսքի մեջ պետք է կարողանալ ճիշտ տեղեկատվություն ընտրել և ժամանակին համընթաց քայլել: Ուսուցիչը պետք է պատրաստ լինի անընդհատ գիտելիքները հարստացնելու, յուրացնելու այն մեթոդները, որոնք կիրառելի և արդյունավետ կլինեն տարրական դասարաններում աշակերտների հետ աշխատելիս, մեծ պատասխանատվությամբ մտնի տվյալ դասարան և անի առավելագույնն աշակերտներին կրթված և արժանապատիվ քաղաքացիներ դաստիարակելու հարցում: Աշակերտներն էլ իրենց հերթին պետք է հետևեն այն հրահանգներին, որոնք կտա իրենց ուսուցիչը, օգտվեն այն հնարավորությունից, որ դեռ փոքր հասակից արդեն կարող են տիրապետել շատ ու շատ գործիքների, որոնք իրենց ողջ կյանքում կարող են դառնալ լավ ապագայի և հաջողակ մարդ լինելու գրավականը:

Ի վերջո կարող ենք փաստել, որ ՏՀՏ գործիքների կիրառումն ուսումնական գործընթացում չափազանց կարևոր է և ներկայումս այն ավանդական մեթոդի հետ համընթաց գնում է առաջ: Պետք է փաստել, որ կրթության գլխավոր արդյունքներից մեկը պետք է լինի անհրաժեշտ տեղեկատվությունն ինքնուրույն ձեռք բերելու, հիմնախնդիրները տեսնելու և դրանց լուծման ճանապարհները գտնելու, ստացած գիտելիքները քննադատաբար վերլուծելու և դրանք նորանոր խնդիրների լուծման համար կիրառելու կարողությունը, իսկ այս ամենն աշակերտը կարող է ձեռք բերել հենց դպրոցում՝ ՏՀՏ գործիքները կիրառելիս[4]:

[4] Աստվածատրյան Մ.Գ., Թերզյան Գ.Հ…, 2004, էջ 24-26

ԳԼՈՒԽ 2. ՏՀՏ գործիքներից օգտվելու առավելություններն ու թերությունները տարրական դասարաններում. ուսուցիչ-աշակերտ համագործակությունը

Հանրակրթության բարեփոխումների գերակա խնդիրը կրթության որակի ապահովումն է, որի շուրջ ներկայացվում են տարբեր մոտեցումներ և ռազմավարություններ: Դրանց շարքում կարևորագույններից մեկն ուսումնական գործընթացում ժամանակակից տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումն է: Արդի դարաշրջանը նշանավորվում է տեղեկատվական տեխնոլոգաների զարգացմամբ և կիրառմամբ[5]:

ՏՀՏ-ների կիրառումը դպրոցում առավել հարստացնում և հետաքրքիր են դարձնում դասերը: Ուսուցիչը, այս գործիքները կիրառելով, կարողանում է տվյալ օրվա դասն աշակերտներին ներկայացնել ավելի արդիական մեթոդներով և բացի դասը նաև իր սաներին սովորեցնել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվել: Այս ամենի համար նախ ուսուցիչն ինքը պետք է իր գիտելիքները հարստացնի, վերապատրաստումներ անցնի, որպեսզի ճիշտ և նպատակային կերպով այդ գիտելիքները փոխանցի իր աշակերտներին: Ուսուցիչը ՏՀՏ-ների կիրառման պարագայում հանդիսանում է ոչ միայն տեղեկատվության, գիտելիքների, փաստերի «աղբյուր», այլև սովորողներին աջակցում է դառնալու ուսուցման գործընթացի ակտիվ սուբյեկտներ, ուղղորդում է

[5] Արամյան Ն. Ս. Մանկավարժության արդի խնդիրները Մարտահրավերներ և լուծումներ Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու Երևան ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն 2015թ. էջ 64-67

աշակերտներին ինքնուրույն փնտրել նոր տեղեկատվություն, պարզաբանել, թե գտածն արդյոք համապատասխանում է տրված պահանջներին, ինչպես նաև հասկանալու, թե այդ ինֆորմացիան ինչպես օգտագործել իրենց առջև դրված հարցերի և բարդ պրոբլեմների լուծման դեպքում[6]:

Ինչպես վերը նշել ենք, երեխայի զարգացումը սկսվում է հենց տարրական դասարանից, ուստի եթե այդ ժամանակ նրան տրվի հնարավորություն օգտվել արդի և նոր տեխնոլոգիաներից, ապա հետագայում դրանք օգտագործելն ավելի հեշտ կլինի:

ՏՀՏ-ի կիրառումը կարող է ունենալ և՛ առավելություններ, և՛ թերություններ: Այն կարող է նպաստել տարրական դպրոցի կրթական գործընթացում տեսական մտածողության զարգացմանը և բարելավել կրթական գործընթացի արդյունավետությունը: Այս տարիքում առաջնային պլան է մղվում մտածողության զարգացումը, այն դառնում է առավել տրամաբանական, ինքնուրույն, ճկուն: ՏՀՏ-ների կիրառումը տարրական դասարաններում օգնում է նաև սովորողներին կողմնորոշվել շրջապատող իրականության մեջ, տիրապետել տեղեկատվական դաշտում աշխատելու գործնական միջոցներին, էլ ավելի զարգացնել տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու կարողություններն ու հմտությունները: Բնականաբար, տեղեկատվական միջոցների ճիշտ ընտրությունը և օգտագործումը տարրական դասարաններում մանկավարժական կարևորագույն խնդիր է: Բացի նշված առավելությունները ՏՀՏ-ների ոչ ճիշտ ուսուցանումը կարող է բերել նաև բասացական հետևանքների: Օրինակ՝ տարրական դասարանում սովորող աշակերտը, երբ օգտվում է համակարգչից, շատ դեպքերում այն բացի դասերի համար ծառայեցնելը, դառնում է որպես խաղի միջոց, որն էլ իր հերթին շեղում է աշակերտի ուշադրությունը: Նա կարող է դառնալ ցրված, ուշադիր չլինել դասաժամերին, չլսել ուսուցչին, դառնալ ագրեսիվ և կամակոր: Այս ամենից խուսափելու համար ուսուցիչը նախ պետք է բացատրի տվյալ գործիքից

[6] Թորոսյան Ա., ՏՀՏ-ի արդյունավետություն կիրառումը դպրոցում, Էլեկտրոնային պաշարների շտեմարան, 2012:

օգտվելու հմտությունները, սովորեցնի, թե ինչպես կարելի է տարբերակել ճիշտ և սխալ տեղեկատվությունը, աշակերտներին բացատրի, որ տարրական դասարաններում պետք է նրանց ուշադրությունն ամբողջողվին սևեռվի դասապրոցեսի վրա և որ համակարգիչն օգտագործվի միայն օրվա դասի նյութի յուրացման համար և սահմանված ժամանակով: Այստեղ շատ է կարևորվում նաև ծնողների դերը, քանզի դպրոցից դուրս էլ աշակերտներն օգտվում են ՏՀՏ-ներից, ծնողներն էլ իրենց հերթին պետք է ուշադրություն դարձնեն, որ իրենց երեխաները ճիշտ օգտվեն տվյալ միջոցներից և հետևեն իրենց ուսուցչի հանձնարարությունների կատարմանը:

Շատ կարևոր են նաև համացանցից օգտվելու հմտությունները: Ներկայումս համացանցի միջոցով երեխան կարող է տեղեկանալ ցանկացած ինֆորմացիայի, քանի որ այդ դաշտը չի վերահսկվում: Երեխային վերցրած ինֆորմացիան կարող է բացասական ազդեցություն ունենալ նրա աշխարհայացքի և հոգեբանության վրա, ուստի կարևոր է նրան ճիշտ ուղղորդել և մեդիագրագետ անձ դաստիարակել:
Համակարգիչը և հատկապես՝ համացանցը, աստիճանաբար մեկուսացնում են երեխաներին իրականությունից, տանում դեպի երևակայական, վիրտուալ աշխարհ: Դրանցից բացի, հոգեբանական նախադրյալների մեջ նշվում են ցածր ինքնագնահատականը, համակարգչային խաղի ընթացքում սեփական վարքը վերահսկելու անկարողությունը, որոշումների կայացման պատասխանատվությունը ուրիշների վրա թողնելը, կատարած սխալներն արդարացնող փաստարկների որոնումը: Այս ամենից խուսափելու համար շատ կարևոր է և՛ ուսուցչի, և՛ ծնողի դերը: Իհարկե երեխան պետք է նորագույն տեխնոլոգիաներին տիրապետի, բայց դրանց չարաշահումը կարող է ազդել նրա կյանքի որակի վրա:

Այսօր էլ ուսուցիչը նախկինի պես մնում է ուսուցման բարդ գործընթացի անհրաժեշտ միջնորդը նոր գիտելիքների և աշակերտների միջև, սակայն ՏՀՏ-ի և կրթության ինտեգրումը նպաստում են ուսուցչի նոր դերի ձևավորմանը: Սա տարրական դպրոցի ուսուցչի համար հատուկ պատասխանատվություն է սահմանում: Նրա խնդիրն է ոչ միայն կարդալ ու գրել սովորեցնել, այլ նաև երեխայի հոգևոր հիմքը հաստատել,

բացահայտել նրա լավագույն որակները, ուսումնական գործունեության ուղիները ցույց տալ: Հենց վերջինն էլ հատկապես կարևոր է այժմյան արագ փոփոխվող, տեղեկատվությամբ հեղեղված աշխարհում: Պետք է սովորեցնել երեխային աշխատել տեղեկատվության հետ: Տարրական դասարանում աշակերտի մոտ ինտենսիվ զարգանում և հարստանում է խոսքը: Ուսուցչի հետ ճիշտ հաղորդակցությունը հետագայում կհանգեցնի գրագետ խոսքի և կրթական բարձր մակարդակի ձևավորմանը: Այս ամենին հասնելու համար բացի դասի ավանդական մոտեցումը, ՏՀՏ-ների կիրառումը ևս կհեշտացնի այս գործընթացը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը դասերի ընթացքում պետք է լինի մտածված և նպատակային: Տարրական դպրոցում դասը պլանավորելիս ուսուցիչը պետք է մանրամասն ուսումնասիրի և սահմանի տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման նպատակը, տեղը և օգտագործման եղանակը: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հետ կապված՝ ուսուցիչները լայն հնարավորություն են ստանում օգտագործել վիդեո և աուդիո նյութեր, դասն ավելի տպավորիչ դարձնելու համար: Անկասկած, սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացման արդյունավետությունը մեծանում է, եթե հաշվի են առնվում նյութի ընկալման և մշակման անհատական առանձնահատկությունները:

ՏՀՏ-ների օգտագործման ժամանակ աշակերտը դասերի ժամանակ դառնում է ակտիվ մասնակից, իսկ ուսուցիչը՝ հանդես է գալիս որպես խորհրդատու, խրախուսում է աշակերտի անհատականությունը, ինքնատիպությունը և անկախությունը:

Այսպիսով՝ ՏՀՏ կիրառումն ուսուցման գործընթացում թույլ է տալիս.

. Զարգացնել հետազոտական և ստեղծագործական հմտություններ
. Խթանել միտքը
. Ձևավորել տեղեկատվության հետ աշխատելու ունակություն և իրազեկություն
. Սովորողին ակտիվորեն ներգրավել ուսումնական գործընթացի մեջ
. Ապահովել սովորողի և ուսուցչի միջև ուսումնական գործընթացում համագործակցություն

. Կարևորել նոր գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտություն

Եզրակացություն

Ի վերջո կարող ենք նշել, որ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հիմնական նպատակը կրթության որակի բարելավումն է: ՏՀՏ-ների օգտագործումն ուսումնական գործընթացում կարող է հեշտացնել դասապրոցեսի անցկացումը, բարձրացնել սովորողների հետաքրքրությունն առարկան ուսումնասիրելու, նոր գաղափարները կյանքի կոչելու համար: Այն նպաստում է տրամաբանական մտածողության, մտավոր աշխատանքի, ինքնուրույն աշխատելու հմտությունների ձևավորմանը:

Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տարրական դասարաններում ՏՀՏ-ներով աշխատելիս մեծ կարևորություն ունի ուսուցչի կրթական մակարդակը, նոր գիտելիքներով զինվելու անհրաժեշտությունը և ժամանակին համընթաց քայլելու պատրաստակամությունը: Այս ամենը դպրոցում կիրառելու ժամանակ կարևոր է աշակերտներին սովորեցնել ճիշտ և նպատակային օգտագործել այդ տեխնոլոգիաները և օգտվել դրա ընձեռած հնարավորություններից: Դասերի հետաքրքիր անցկացումը, դրանք ավելի պատկերավոր և շեշտադրված դարձնելը պետք է լինի յուրաքանչյուր ուսուցչի պարտքը, իսկ նշված գործիքները միայն ավելի մեծ հնարավորություններ են ստեղծում այդ ամենը կյանքի կոչելու համար: ՏՀՏ-ների բազմաթիվ առավելությունների կողքին չպետք է անտեսել նաև դրանց հնարավոր բասացական ազդեցությունն աշակերտների վրա, ուստի պետք է չկորցնել զգոնությունը, դասարան մտնել մեծ պատասխանատվությամբ և ամեն կերպ աշակերտներին զերծ պահել հնարավոր սխալ քայլերից:

Այսպիսով կարող ենք փաստել, որ այսօր հասարակության լիարժեք անդամ ձևավորելու համար անհրաժեշտ է ժամանակակից պահանջներին համապատասխանող կրթական համակարգ, որի պարտադիր պայմանը

սովորողների կողմից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներին լիարժեք տիրապետումն է դպրոցի բոլոր աստիճաններում՝ սկսած տարրականից: Հենց այս տարիքում է երեխան ձևավորվում և ստանում այն հիմնաքարային գիտելիքները, որոնք ուղեկցում են նրան ողջ կյանքի ընթացքում և ստեղծում են նրա համար ճիշտ ապագա: Չպետք է մոռանալ, որ հայրենիքի և հասարակության արժանապատիվ քաղաքացի դաստիարակելու դժվարին և պատասխանատու գործը դրված է հենց մեր՝ ուսուցիչներիս ուսերին, ուստի մենք պարտավոր ենք այդ գործը պատվով կատարել:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աստվածատրյան Մ.Գ., Թերզյան Գ.Հ…, 2004, էջ 24-26

2. Արամյան Ն. Ս. Մանկավարժության արդի խնդիրները Մարտահրավերներ և լուծումներ Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու Երևան ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն 2015թ. էջ 64-67

3. Թորոսյան Ա., ՏՀՏ-ի արդյունավետություն կիրառումը դպրոցում, Էլեկտրոնային պաշարների շտեմարան, 2012

4. Խաչատրյան Ռ. Մարտիրոսյան Կ. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները որպես աշակերտների ուսումնական գործունեության անկյունաքար «Մխիթար Գոշ» ուսումնամեթոդական հոդվածներ 2016, էջ 213-215

5. Հակոբյան Լ. Ադամյան Ն. Ժամանակակից տեղեկատական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը տարրական դպրոցում «Մանկավարժական միտք» 2016 3-4(62-63) էջ 211-214

Էլեկտրոնային նյութեր

https://www.e-draft.am/ru/projects/3303